ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպության ժողով գումարելու մասին

Ի կատարումն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ հրապարակում ենք հայտարարություն առ այն, որ՝

Համաձայն վերոնշյալ Օրենքի՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԿ (այսուհետ՝ Բյուրո) խորհրդի մեկ անդամ ընտրում են

- սպառողների իրավունքները պաշտպանող, առնվազն երեք տարվա պետական գրանցում ունեցող կազմակերպությունները՝ իրենց միջև ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ երկու տարի ժամկետով,

Այդ ընտրությունը կատարելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:00-ին ՀՀ կենտրոնական բանկի շենքում՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում, կազմակերպում է ժողով:

Բոլոր այն կազմակերպությունները, որոնք բավարարում են վերոհիշյալ պահանջին և ցանկանում են մասնակցել ժողովին, պետք է մինչև 2023 թվականի մարտի 29-ը այդ մասին գրավոր հայտ ներկայացնեն ՀՀ կենտրոնական բանկ՝ հայտին կցելով պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները:

Այն կազմակերպությունները, որոնք հիշյալ ժողովում ընտրվելու համար մտադիր են ներկայացնել Բյուրոյի խորհրդի անդամի թեկնածու, հայտին պետք է կցեն նաև այդ թեկնածուի անունը և ազգանունը, տեղեկություններ նրա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ, փոխկապակցվածությունը Բյուրոյի անդամների հետ (բացակայության դեպքում՝ նշում փոխկապակցվածության բացակայության մասին), նրան առաջադրող կազմակերպության անվանումը և վերջինի հավաստումն առ այն, որ ներկայացված թեկնածուն իր մասնագիտական կարողություններով ի վիճակի է ապահովել Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված խորհրդի լիազորությունների պատշաճ իրականացումը և առկա չեն Բյուրոյի կանոնադրության 123-րդ կետով սահմանված սահմանափակումները:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (010) 59-25-92 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ